

տը: Բեթփազէ (արբ. Ապրոսիս) շատ կանուխէն կործանուած է, բայց աւանդութիւնը հաւատարմօրէն պահած է անունը և վայրը այն տեղւոյն որ էր «Բեթփազէի դիմացը»՝ ուր մեր Տէրը պատրաստելով իր յաղթական մուտքը յերուսաղէմ, կատարեց Չաքարիայի մարգարէութիւնները. «Ուրախ լիւր յոյժ, դուստրը Սիոնի, քարոզեա՛, դուստր երուսաղէմի, ահա թագաւոր քո գայ առ քեզ, արդար եւ փրկիչ, նոյն հեզ՝ եւ հեծեալ ի վերայ իշոյ եւ յաւանակի նորոյ» (Չափ. Թ. 9):

Չգիտցուիր թէ ե՛րբ հիմնարկուած էր Բեթփազէի եկեղեցին այն տեղին վրայ՝ որ, ինչպէս կ'ըսէ Աւետարանը «հանդէպ մեր կայ»: Հաւանաբար շատ կանուխէն շինուած էր ան և կը պարունակէր այն վէմը՝ որուն վրայէն մեր Տէրը նստաւ իշուն վրայ, որը յաղթանակաւ առաջնորդեց յերուսաղէմ: Երկար դարեր փլատակներու տակ մնացին եկեղեցին և տեղւոյն յիշատակարան քարը, բայց աւանդութիւնը չկորսընցուց զանոնք:

Սաչակիրները վերանորոգեցին այս եկեղեցին եւ նոյն ժամանակն էր որ Մաղկազարդի օրը հաստատեցին տարեկան թափօր մը, ի յիշատակ Քրիստոսի գալլստեան յերուսաղէմ: Սաչակիրներու մեկնումէն յետոյ դարձեալ Բեթփազէի սրբավայրն ու յիշատակարան քարը աւերակներու տակ մնացին:

1876 – 83 ին, հետազօտութիւններով գտնուեցան Բեթփազէի եկեղեցին և յիշատակարան քարը: Վերջինը անկանոն քառակուսի ձեւ մ'ունի. երկայնութիւնն է 1.30 մ., լայնութիւնը հիւսիսէն 1.6 մեզր, բարձրութիւն՝ գրեթէ 1 մ. խորանարդ և թանձրութիւնը 1.50 մեզր: Բեթփազէի քարը հողին յարակից